



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ 1899 ԹՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբարիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՐԱՍՏԱՆԸ (Բաղրատայա և Բարձրակայա փողոցների անկիւն):
Կարողութեան ուրիշ բաղադրանքից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գիտնել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Գ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Մի պատճառ ևս... Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Որն է գերադասելի. Մամուլ. Նամակ Սոցիալիզմ. Նամակ Վարդապետից. Նամակ Բալասանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԱՐԱՍՏԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՄԻ ՊԱՏՃԱՌ ԵՒՄ

Պարսից լրագրողներից մէկը վերջերս յարուցել է մի հարց, որն իր հոգեւորական, որքան հետաքրքրական, նոյնպիսի և կենսական է և առանձին կարեւորութիւն ունի մեր երկրի, Կովկասի համար: Պարսկաստանը, որքան էլ դեռ ընկղմված է անշարժութեան և խաւարի մէջ, բայց համաշխարհային, եւրոպական քաղաքակրթութիւնը այնու ամենայն իր ազդեցութիւնը գործում է նրա վրա: Պարսից կառավարութիւնը ինքն զգում է իր վրած, ուսումնառած պաշտօնեաների, մասնագէտների անհրաժեշտութիւնը, ուստի և գրեթէ ամեն տարի մի քանի երիտասարդներ ուղարկում է Եւրոպա, գլխավորապէս Ֆրանսիա՝ ուսում ստանալու համար: Յաճախ պատահում է, որ Եւրոպա գնացած պատանիներից շատերը, աւարտելով իրանց ուսումը, եւրոպականաւորվում, այնուհետ էլ մնում են և չեն վերադառնում. պատահում է, որ վերադարձողներն էլ, ոչ մի բանով կապված չը գտնվում իրանց հայրենիքի և պարսիկ ժողովրդի հետ, գտնվում իրանց մի նոր մթնոլորտի մէջ, ունենալով բոլորովին օտար աշխարհայեացք, չեն կարողանում օգտակար հանդիսանալ և արդարացի իրանց վրա դրված յոյսերը: Այնու ամենայն, այդպիսիները դարձեալ կարող էին որ և է թարմութիւն, նոր կենսական մտքներ իրանց հայրենի մթնոլորտի մէջ, եթէ նրանց թիւը չափազանց չնչին չը լինէր: Սրի ծաղկում գտնվող չի լինի ասում է ժողովրդական առածը. հարկաւոր է, որ եւրոպական կրթութիւն ստացած պարսիկ երիտասարդների թիւը գոնե տասնեակներով աւելանայ ամեն տարի, որպէս զի համապարփ խաւար կարողանայ քիչ նօսրանալ և լոյսի ձառագայթները կարողանան թափանցել: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ պարսիկ ժողովուրդն ինքն ձգտում յոյս տայ իր զա-

ւակներին եւրոպական կրթութիւն տալու: Արդ, ինչպէս հաստատում են պարսկական լրագրողը և Պարսկաստանին մօտ ծանօթ անձինք, պարսիկները մեծ ուրախութեամբ կուղարկէին իրանց զաւակներին եւրոպական կրթութիւն ստանալու, եթէ հարկան մի յարմար, իր պայմաններով մատչելի երկիր լինէր և այդ երկրում գտնվէին բարձր կրթական հաստատութիւններ: Այդպիսի մի երկիր, ընդհանուր կարծիքով, հանդիսանում է Կովկասը: Եւ Կովկասը, եթէ ունենար մի համալսարան, կամ մի այլ բարձր կրթական հաստատութիւն, կը գրաւէր պարսիկ երիտասարդների ահագին բազմութիւն և շատ կարճ ժամանակում Պարսկաստանը կարող էր մեծ փոփոխութեան և բարոյական վերածնութեան ենթարկվել:

Եւ ձգտարիտ, ոչ մի երկիր այնքան յարմար չէ քաղաքակրթողի և լուսաւորողի գեր խաղաղ Պարսկաստանի վերաբերմամբ, որքան Կովկասը: Կովկասը, լինելով հարևան Պարսկաստանի հետ, սերտ կերպով կապված տնտեսական, ցեղական, առևտրական, պատմական կապերով և շահերով, ունենալով իր մէջ բազմաթիւ թուրք ժողովուրդ, որը թէ կրօնով, թէ ազգակցութեամբ և թէ այլ կենսական կապերով շատ մեծ առնչութիւն և յարաբերութիւն ունի պարսիկ ժողովրդի հետ, հանդիսանում է միակ երկիրը, ուր պարսիկը կարող է ամենամեծ վտահոլութեամբ ուղարկել իր զաւակին, առանց երկիւղ կրելու, թէ նա կարող է օտարանալ, խորհրդանալ, դաւաճանել իր հայրենի տանը և երկրին: Եւ վերջապէս, ինչպիսի, ժողովրդ պարսիկը, ուղարկելով իր զաւակին Կովկաս, աւելի քիչ ծախս կանի, քան ուղարկելով Եւրոպա:

Բայց որպէս զի Կովկասը կարողանայ կատարել քաղաքակրթական այդ մեծ դերը Պարսկաստանի վերաբերմամբ, անհրաժեշտ է, որ նա ինքն ունենայ մի համալսարան կամ մի այլ բարձր կրթական հաստատութիւն: Եւ այդ կողմից կովկասեան համալսարանը կը ստանայ ոչ միայն զուտ քաղաքակրթական, այլ և ահագին քաղաքական նշանակութիւն, և ուսուցող ազդեցութիւնը Պարսկաստանի վրա աւելի խոր և իրական կը լինի, քան եղել է և է մինչև այժմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՐՆ Է ԳՆՐԱՎԱՍԵԼԻ

Ինչպէս յայտնի է, Բագրուի համարեա ամբողջ ինտելիգենցիան այժմ նուիրված է նախալին գործերին և նպատակ է դրել հարստանալ: Օգտակար է այդ երեւոյթը, թէ ոչ—անա մի շատ կարեւոր հարց, որ արժէ պարզել: Մեր կարծիքով, այդ երեւոյթը օգտակար չէ և ոչ միայն օգտակար չէ, այլ և վերին աստիճանի փաստակար, որպէս երկրի մոտաւոր առաջագիծութեան խանգարող և յետադիմութեան նպաստող մի ֆակտոր: Տեսականապէս դատելով, մարդ այն եղբայրացութեան է գալիս, որ կապիտալ, անցնելով տեղանքից ինտելիգենտ մարդկանց ձեռքը, կը գտնի գործադրութեան իսկական ճանապարհը: Սակայն, տարաբաղաժան, դիմելով իրականութեան, փաստերին, միանգամայն հակառակն ենք տեսնում: Այժմ Բագրուում կան բազմաթիւ ինտելիգենտ կապիտալիստներ. նրանցից մին է արդարացի իր վրա դրած յոյսերը: Արդեօք նրանք, որպէս կապիտալիստներ, փոքր ի շատէ բարձր են կանգնած տեղեկապիտալիստներից: Հէնց բանն էլ այն է, որ ոչ միայն բարձր չեն կանգնած, այլ նոյն իսկ աւելի ստոր են: Թուրք մեղադրներ իրանց միջից տուել են մի Թաղիւկ, Ղարաբաղի զինվորները մի քանի մարդիկ: Ինչ են տուել մեր ինտելիգենտ կապիտալիստները: Չէ որ նրանց մէջ էլ կան Թաղիւկի չափ հարուստներ, որոնք բարձրագոյն ուսում ստացած լինելով հանդերձ, ոչ մէկի և ոչ միւսների առաւանձնութիւնն ունեն: Այդպէս են նաև միւս բազմաթիւ մեծ ու փոքր ինտելիգենտ կապիտալիստները, որոնց թիւում և մեր նախկին իդէալիստ ուսուցիչները, այն ուսուցիչները, որոնք մի ժամանակ 60 ռուբլի էին ստանում և երջանիկ էին, իսկ այժմ հազարներ են ստանում և դեռ բաւական չեն, դեռ էլ ձգտում են հարստանալու: Իրականութիւնը, փաստը ցոյց է տալիս, որ միանգամայն սուտ է այն զգուշիկ պատճառաբանութիւնը, թէ նրանք կամենում են միայն փոխհարկել: Ապահովութիւնը դուրս պարտել չէ, բայց երբ նրանք ընկնում են պերճանքի, փարթալութեան ետեւից, դա արդէն անհերքելի է: Այս է իրականութիւնը: Չը կայ մէկը, որ բացառութիւն կազմեր, ուրեմն ինչ իրաւունք ունենք մենք այլ կերպ դատելու:

Թիւում են մի երանելի ժամանակը, երբ նստած համեստ հայ ուսուցիչ համեստ բնականութեամբ, մենք վիճում էինք զանազան հասարակական հարցերի մասին: Այդ երջանիկ ժամանակն անցաւ: Այժմ առաջվա համեստ բնականութիւն փոխարինել են շքեղ կահույքով ունեւաններ, առաջվա «զիջք», «զարդոց» խօսքերին տեղի են տուել ուրիշ խօսքեր՝ ակցիա, նաւթ, փող, վերքեր... Սրանք են նաև այժմեան ինտելիգենտի նուիրական խօսքերը:

Մենք երկարացնելու կարելի չենք զգում և հարց ենք տալիս՝ որն է գերազանցել ներկայ դէպքում—ինտելիգենտ առանց կապիտալի լինի և մնայ իր կոչման բարձրութեան վրա, թէ կապիտալ իր ձեռքը գցի, կորցնելով ինտելիգենտի բարձր յատկութիւնները: Ով որ անկեղծ բարեկամ է ժողովրդին, նա, անկասկած, կը դերադասէ առաջինը: Ինտելիգենտ կապիտալիստ դառնալով՝ դրանով միայն աւելացնում է կապիտալիստների թիւը և ուրիշ ոչինչ, մինչդեռ հասարակութիւնը յանձնի նրա կորցում է իր օգտակար անդամին: Իսկ որ ինտելիգենտը, հարստանալով, դադարում է հասարակութեան օգտակար անդամ լինելուց, դա փաստ է գոնե Բագրուի ինտելիգենցիայի վերաբերմամբ:

Ա. Ա.

Մ Ս Մ Ո Ւ Լ

Իրողութիւն է, որ Երզրզի պնակալէզները գնալով յանդիմանում են: Կ. Պօլսում միայն թիւրք փաշաների և հայ էֆէնդիների վսեմաշուք պատանները վայելող լրա-

գիրները կարող են տալ «Մշակի» անունը, խօսել «Մշակի» մասին: Եւ նաև այդ տեսակ պնակալէզներից մէկը, եթէ չստանք ամենազգուշիկ, մի ինչ որ Բիւզանդ Քէչեան, իր համար փառաւոր արհեստ է դարձրել ամեն օր հայտնաբերել թափել «Մշակի» վրա, հայտնաբերել, որոնց անսպառ աղբիւրները այդ ողորմելի արարածը անշուշտ թիրբակաւ «սալոններում» է գտնում: Եւ որովհետեւ Կ. Պօլսում այժմ ասպարէզը պատկանում է Քէչեաններին և Պարտիզակցի Վահաններին, ուստի հայտնաբերելի կեղտը վայելում են ընթերցողները առանց բողբոլի, մատնութիւններին առիթ չը տալու համար: Սակայն մեզ համար «Բիւզանդիստի» լրագրողները ոչինչ նշանակութիւն չունեն: Մենք պատանեղանք Քէչեանի դիմակը և այժմ շատ դո՛հ ենք, տեսնելով մեր ձեռքի ոյժից զալարվող վարձկանին: Այդ վայնասունը շատ լաւ ապացոյց է, որ մենք մեր ձեռքը դրել ենք հայ մամուլի մի անձուռնի պալարի վրա: Մնացածը մեզ չէ հետաքրքրում և Քէչեաններն ու Պարտիզակցի Վահանները մեզ միայն պատու են անում իրանց հայտնաբերութիւններով թող դարդարվեն այն բացասական ոյժերը, որոնց հաւածելը մենք մեր սրբազան պարտքն ենք համարել:

*

Նոր տարվանից «ԿԱՅՐԱՅ»-ի խմբագիրը, կարծես, կորցրել է հաւասարակշռութեան ամեն մի կէտ և սկսել է գլխավոր գլորվել անհեթութիւնների անդունդը: Իր լրագրի առաջին համարում պ. Վէլիչկոյ ասացել էր թիւրքերի մի քանի հարկուր հայեր են կոտորվել, այն էլ այն պատճառով, որ բարի ու ազնիւ թիւրքերը զգլվել էին հայ զաւառուներին: Դա «բանաստեղծական» զուգանցանք էր, առաջացած հայա-կերութեան տենդերից, և տեղական «Ինֆանտիստ» լրագրի երկու յօդուածով վերականգնեց պատմական ճշդութիւնը:

Երկրորդ և աւելի խոշոր անհեթութիւնն այն էր, որ մի ինչ որ անյայտ ընթերցող պ. Վէլիչկոյ թիւրքի տակ ապաստանված՝ սկսեց ապրումով հաւատարմել թէ օրէնքը չէ ճանաչում Շամախու և Շուշու կոմսիտորիաները և թէ կան այդպիսի հիմնականութիւններ, ապօրէն են: Տգիտութեան մէջ աւելի հեռու գնալ հազիւ թէ կարելի լինի: Ապրել Թիֆլիսում, ամեն օր կործնեք ձեռք լըրել երկրի բոլոր չարն ու բարին ճանաչող և չիմանալ, որ Շամախում մի քանի տասնեակ տարիներից ի վեր գոյութիւն ունի Շամախու թեմի կոմսիտորիան, իսկ Շուշում—Լարաբաղի թեմի կոմսիտորիան... Ինչ է դա ցոյց տալիս:

*

Լաղարեան ճեմարանում արաբերէն լեզու աւանդող պ. Կրիմսկի, որ երկու տարի ապրել է Բէյրութում, հրատարակել է մի աշխատութիւն, որի վերնագիրն է «Մասնագիտութիւն և նրա ապագան»: Այդտեղ հեղինակը այն միտքն է յայտնում, որ մասնագիտական արեւելուց կան աղբակներ, որոնք կարող են առաջադիմել, զարգանալ. դրանք պարսիկներն են, արաբները և հուրիները: Իսկ թիւրքերը: Սրանք դեռ այն ժամանակ, երբ պատմութեան մէջ նոր էին հանդէս գալիս իբրեւ նուաճողներ, յայտնի էին իրանց բոլի և նեղ խելով, դէպի մոտաւոր անշարժութիւնը ունեցած սիրով, կոյր պահպանութեամբ և ֆանատիկոսական ատելութեամբ դէպի ամեն մի բան, որ դուրս էր մասնագիտութիւնից: Պ. Կրիմսկի գտնում է, որ նոյն յատկութիւնները կան և այժմեան թիւրքերի մէջ և նրանք պիտի առաջագիծութեան խոչընդոտ հանգիստանան, քանի որ գոյութիւն կունենայ թիւրքական անկախ պետութիւն: Խուսափեցանք խորհուրդ են տալիս Եւրոպային թիւրքերի վրա նայել «մարդասէր» համբերութեամբ և սպասել, որ «եբը և իցէ», մի քանի դարերից յետոյ, թիւրքեան վերջապէս կը մտնի դարափառների մի նոր աշխարհ: Բայց այդ «մի քանի դարերի» ընթացքում միլիոնաւոր քրիստոնեաներ կը տառապեն թիւրքաց լուծի:

տակ, զրկված կրթվելու հնարաւորութիւնից, զրկված իրանց գոյքի, իրանց անձի ապահովութեան, իրանց կանանց, ընտրելի և աղջիկներէ պատուի ապահովութեան յոյսից: Եւ հեղինակը հարցնում է.

«Ո՞րն է մարդասիրութիւնը. այն, որ պահանջում է քեզից, որպէս անհատի, որպէս քաղաքացիի, որպէս քաղաքացիի տիրապետութիւնը—այն ցեղի, որից եկած վնասը ներկայումս անվիճելի է, իսկ ապագայումս անպակաս օգուտը ենթադրական է—թէ այն, որ պատուիր իւրը ցեղի կորստաբեր լուծից արհնայի և հաւատարմեղ մտաւոր արեւական ցեղերը, այլ և մասնաճակատ արաբ ցեղը, որոնց ընդունակութիւնը անկասկածելի է և որոնք զենու կարող են իրանց առատ լուծան մտցնել Եւրոպայի մտաւոր շտեմարանը»:

Հարցը պարզ է և պատասխան գտնելու համար չը պէտք է սար ու ձոր ընկնել...

*

Յայտնի ռուս վրդապետ Անտոն Չէխով, որի առողջութեան մասին վերջերս միայն լուրեր էին տարածված, տպել է «Руссия Вѣдомости» լրագրում մի պատմութեամբ, «Новая Жизнь» վերնագրով: Երբ յատուկ տաղանդով պ. Չէխով այդ տեղ դուրս է բերել, ինչպէս և միշտ, անմիջապէս իրականութիւնը: Չէխով անհիշատակ վրդապետը, որ իր արեւելեան, աղքատութեամբ, խաւար հասկացողութիւններով և կոպիտ բարքերով Գիւղի ժողովրդական է հաստատում մի ինտելիգենտ ընտանիք, որ տոգորված է բարի ցանկութիւններով: Բայց զիւրի իրականութեան հետ երկու երեք անգամ չփոխուց յետոյ, թէ ընտանիքի հայրը, մի ինժեներ, և թէ նրա կինը, որ ծրագրել է զիւրում դուրս բաց անել, ծառայել տղէտ մարդկութեան, յատահատում են և փախչում: Ինչպէս իրականութեան մէջ իր կոպիտ, անտաշ լեզուով խորհրդ էր տալիս տիկնոջը մի երկու տարի համբերել, ընտելանալ իրականութեան: Վերջինս մի երկու կոպիտ ինտելիգենտներով հալածեց թուրքաւոր ինտելիգենտներին:

Տխուր պատկերը տարակույսի մէջ է թողնում ընթերցողին. չը գիտես որն է աւելի խղճալի—տղէտ ժողովուրդը, թէ թուրքաւոր, վարկուտ ինտելիգենտը...

*

Ելմիսանի «Արարատի» նոյեմբեր-դեկտեմբերի համարում, որ այժմ էլ լոյս տեսնում, տպված է Օրմանեան պատրիարքի այն հերքումը, որ վերաբերում է «Մշակին» և որի մասին մենք ժամանակին խօսել ենք: Ահա այդ պաշտօնական թղթը.

Վեհափառ սուրբ Հայրապետ, ի լրոյ տեղեկացեալ իմ, թէ մին ի մերազնեալ օրաթերթի Տիֆլիսի քանիցս հրատարակեալ է, զի իւր այն թէ ի դրամարկէն որոյց որ ընդ պահանջութեամբ մերով է, վնասին ամսաթղթի պաշտօնէից Աղգալին Պատրիարքարանի: Փոխում գրութեամբս յայտ առնել Հորդ Սրբոյ Հոգեւոր, թէ զրա-մարկին այն որոյց ըստ մեզ նուիրական է և անընդարձակ, և զի որ ինչ նուիրեալ է ցայս վայր ժամանակի ի նպատակ որոյց, ի կեր արեւել է միշտ և միմայն ի վնասումն ամսաթղթից սահմանելու որոշուցաց, և ոչ մի դանկ վնասեալ է ցարդ ի պէտս այլոյ ի-րիք, և յայտնեմք ևս անհար է ձեռնամուխ լինել յիրաւունս որոյց:

Ձայն ճշգրտութեամբ իմ հաղորդելով Վեհափառ Տեառնը, խորհրդաբար առաջի առնեն հերքել պաշտօնական զայն ստույթին, որ ոչ միայն պղտոր է զմիտս մերազնէից, այլ և վնաս մեծ պատճառէ որոյց կարօտելոյ:

Մատուցեալ ի համարը սրբոյ աղոյ Վեհափառ Տեառնը, եմ ամենախոնարհ որդի Մաղաքի առաջնորդի սուրբ Պ. Կ. Ի 17 հոկտեմբեր 1898:

Սյով—audiat et altera pars. պատրիարք Օրմանեանի «հերքումը» վերաբերում է Բօլզա-րիայի մեր թղթակցի մի նամակին, որ տպված է տասն և մէկ ամիս սրանից առաջ «Մշակի» № 11-ի մէջ: Ահա ինչ էր գրում մեր թղթակցը.

«Թէ որքան իրաւունք ունենիք ըսելու, որ Օրմանեան պատրիարքին Հայաստանի կարօտելուց համար յանձնված գումարները իրանց նպատակին չեն հասնել, այդ ցոյց կուտայ հետեւեալ ընտրու պարագան—Յուլիարի 8/20-ին, Պօլսոյ հայ թերթերուն նայելով, պատրիարքը, բանախօսութեան մը մէջ, խոստովանեց, թէ պատրիարքարանի պաշտօնէից ամսականները նպատակներէն կը վրձարկին: Հետեւեալ մի օր, նոյն ինքն «Բիւզանդիոն» (լսեցե՛ք) ձայն բարձրացուց այդ տարօրինակ վարչութեան դէմ: Կը յայտնէր այժմ, ինչպէս կը հաստատէ նոյն լրագրից, որ պատրիարքարանի բոլոր հասոյթները, վերջերս կառավարութեան տուած 40,000 դրուշը (ժամաւորապէս 3,350 ռուբլի), բոլոր այն նուէրները, որոնց մէջ Հայաստանի կարօտելոյց է յիշված յատկապէս, պատրիարքարանի պաշտօնէից, հետեւապէս և պատրիարքին են յատկացված: Այդ խոստովանումն լրագրաց մէջ գրվածն է: Անշուշտ զիտար է հաւատալ, որ

այդքանով բաւականանան մեր ջոշերը: Ուրախ ենք, որ պատրիարքն ինքն և իւր օրդանները այն սխիւղմը ունին, որ բաց է բաց կը յայտնեն եղածը: Իսկ եղածը տեղ է, շատ տեղեք»:

Ուրեմն հարցը նախ քան «Մշակի» մէջ լոյս տեսնելը, «օրվայ չարիք» էր Կ. Պօլսի մէջ, այնպէս որ մինչև անգամ պատրիարքարանի հյու-ժառայ «Բիւզանդիոն» էլ չը կարողացաւ պնտ-կալէզներին յատուկ ձարկիւլութեամբ չափել պատրիարքարանի արածները: Օրմանեան լուեց այն ժամանակ և միայն հոկտեմբերին մտածեց հերքել Կովկասում այն, ինչ հերքված պիտի լի-նէր Կ. Պօլսում: Հարցնում ենք. միթէ դա հեր-քում է...

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Գեկտեմբերի 29-ին

Անցեալները թիֆլիսի պ. նահանգապետից կարգադրութիւն էր ստացվել՝ արգելել նաւթի պահեստներ ունենալ քաղաքից 100 սաժէն տա-րածութիւնից մօտ: Արգելում է նոյնպէս նաւթ ծախել խանութներում. դրա փոխարէն վաճառ-ականները պէտք է կառուցանեն առանձին շինութիւններ նաւթի համար և պահեն 1 պու-ղից ոչ աւելի:

Վերջերս քաղաքային գործերի առիթով կա-յացքած ժողովում՝ պ. դաւաճապետը պահան-ջեց անմիջապէս դործադրել պ. նահանգապետի այդ կարգադրութիւնը: Սրա դէմ քաղաքային օգնականը եռանդով բողոքեց, պատճառաբանե-լով, որ եթէ անմիջապէս իրագործվի այդ՝ քա-ղաքը կը մնայ առանց նաւթի: Նա պահանջում էր, որ ժամանակ տրվի վաճառականներին՝ չի-նել առանձին շինութիւններ նաւթ ծախելու համար. սակայն նրա հիմնաւոր պատճառաբա-նութիւնը չանցաւ: Ուսումնասիրելով արգելեց նաւթ ծախել խանութներում և դրա պատճառով տուած քաղաքականութիւնը. նաւթի գինը 4 կօ-պէկից բարձրացաւ. մինչև 10 կօ: Այս առիթով կայացաւ քաղաքային ինքնավարութեան նիստը: Դրանում վնեց՝ ինչորեք պ. նահանգապետին թողնել նաւթի պահեստները նախկին տեղում և իրաւունք տալ խանութներին նաւթ ծախել իրանց խանութներում մինչև որ առանձին շինու-թիւններ կը կառուցվեն նաւթի համար: Անկաւ-կած, պ. նահանգապետի կարգադրութիւնը գո-վել է անպայման՝ նպատակ ունենալով ազատել քաղաքը հրեշից, սակայն ավտոտ, որ ոտովկա-նութիւնը սխալ հասկացաւ այդ և իսկոյն գոր-ծադրելով վնասի ենթակից ժողովուրդը: Առանց այն էլ այստեղ փայտի և հայի թանգու-թիւն է, դրան աւելացաւ և նաւթի թան-գութիւնը:

Երկ գիշեր լսեցինք, որ մի 52 տարեկան տղամարդ պատկերւում է 16 տարեկան օրիորդի հետ ս. Գէորգ եկեղեցում: Հետաքրքրված՝ եր-կու երիտասարդների հետ գնացինք եկեղեցի «գեղեցիկ զոյգը» տեսնելու: Տեսանք փեսային ալիւր մարդով, որը ամիւր էր երեսը, կամե-նալով երիտասարդական արտայայտութիւն ըս-տանալ: Դրա կողքին կանգնած էր ծաղկաթիթի ճասակով, վառվուռն աչքերով անմեղ նորա-հարսը. նա հեկեկում էր և արտասուք էր թա-փում աչքերից: Տեսնելով այդ, բարեկամս—ինտե-լիգենտ երիտասարդը—բողոքեց, ասելով՝ «Երե-ն են պատկեր: Այս խօսքերն արձագանք գտան. սկսվեց՝ աղմուկ, իրարանցում, բողոքներ. նո-րահարսը սկսեց բարձրաձայն լալ: Իրողը երիտասարդը մոտեցաւ. բանալային և յայտնեց, որ անկարելի է պատկեր նրանց: Քահանան հարցրեց օրիորդի ցանկութիւնը ու ստանալով բացատրական պատասխան՝ արձակեց նրան տուն: Փեսան մնաց չուարված. ապա այժմը հաւաքե-լով՝ հրակրեց քահանաներին տուն՝ հարած լով՝ հրակրեց վայելելու նորահարսի չղրու... Այս օրերս Սղնախ վերադարձաւ մեր համա-կրելի բժիշկ Մ. Մովսիսեան, որը ամբողջ մի տարի անցկացրեց թիֆլիսում աչքերի հիւան-դութիւնը բուժելու համար: Լուր էր պտտում, որ իբր թէ բժիշկը բողոքովին թողնելու է Սղնախ, որի պատճառով հասարակութիւնը վշտացած էր: Ուրախ ենք, որ բժիշկը հեռու է այդ դիտաւորութիւնից: Բժիշկ Մովսիսեան ամ-բողջ ութ տարի ծառայում է Սղնախում և ար-ժանացել է հասարակութեան կատարեալ հա-մակարանքին:

ՆԱՄԱԿ ՎԱՐԱՐՇԱՊԱՏԻՑ

Գեկտեմբերի 28-ին

Վովկասի հայոց Բարեգործական ընկերութեան տեղական վարչութեան անդամների Վաղարշա-պատից բացակայ լինելու և ընդհանուր ժողովների համար յարմարաւոր դահլիճ չունենալու պատ-

ճառով, առաջիկայ 1899 թ.ի նախաձայնի հաստա-տութիւնը և պաշտօնատար անձանց ընտրու-թիւնը բաւական ուշացաւ: Ամսիս 7-ին կայա-ցաւ պաշտօնատար անձանց ընտրութիւնը, և ընտրվեցին՝ Յուսիկ վարդապետ Մովսիսեանց—ընդհանուր ժողովների նախագահ՝ միաձայն, Գ. Մեղրե-Վաղարշեանց—ընդհանուր ժողովի քա-րտուղար՝ միաձայն. վարչութեան անդամներ, ձայների առաւելութեամբ՝ Սարգիս քահանայ Սլանեանց, Գ. Նաւասարդեան, Ե. Շահմա-նեանց և Ա. Բոլոնիսի ու երկու փոխանդամներ՝ Ս. Զաքարեանց և Գ. Զարգարեանց. իսկ վե-րատուգող լանձնաժողովի անդամներ ընտրվե-ցին՝ Սիւս վարդապետ Տէր-Մանուէլեան, Թ. Սա-րոյանեանց և Յ. Մուշեղեանց: Ընտրութիւնը պէտք է բաւական աջող համարել, որովհետեւ ընտրվածները համարեալ բոլորն էլ տեղացիներ են, որպիսի հանգամանք մեծ նշանակութիւն ունի աջողութեան կողմից:

Երկրորդ ընդհանուր ժողովը կայացաւ ամսիս 24-ին տղայոց նորագաց դպրոցում, և այդ ժո-ղովին պէտք է ընդէք նոր վարչութեան 1899 թ.ի համար կազմած նախաձայնը: Այս անգամ ժողով էին եկել բազմաթիւ անդամներ հետ նաեւ բաւականաչափ ունեւորներ, որոնց մէջ կային և տիկնիւնք ու օրիորդներ, որովհետեւ այդ օրը բացի նախաձայնի ընտրութիւնից՝ հեր-թական հարցերի մէջ դրված էր նաեւ վարչու-թեան ղեկավարման տեղական ճիւղի տանա-մեալը տօնելու մասին: Այդ առիթով առա-ջարկվեց և միաձայն ընդունվեց. 1) տղաքրի տեղիս ճիւղի տանաւնայ գործունէութեան պատմութիւնը և դրամական հաշիւները. 2) հո-գեւորիստ կատարել այստեղի ճիւղի հանդու-ցեալ անդամների յիշատակին. 3) առաջարկել թիֆլիսի խորհրդին՝ ընտրել Վաղարշապատի ճիւղի և ամբողջ ընկերութեան հիմնադիր բժշ-կապետ Բ. Նաւասարդեանցին պատաւօր ան-գամ և 4) հիմնադրի մեծադիր պատկերը կա-խել վարչութեան գրասենեակում: Տղաքրու-թեան ծախքը վերցրեցին իրանց վրա՝ ճիւղի գործադիր անդամները, իսկ հիմնադրի մեծադիր պատկերը խոստացաւ պատրաստել տալ և նուր-բեք Յուսիկ վարդապետ Մովսիսեանց:

Աջողութեան ցանկանալով նորակազմ վար-չութեան, ցանկանում ենք, որ նա եռանդուն կերպով աշխատէ, գոնէ ի յիշատակ տանաւնեա-կի, ձեռք բերելու դրադարան և կիրակնօրեան զարդ հիմնելու թղթերով: Մեր գիւղացին շատ կարօտ է այդ հիմնարկութիւններին և այդ պատճառով բաւականաչափ գուեք մատուցած է անդործութեան: Կարեւոր է նաեւ առաջիկայ 1899 թ.ի ընթացքում դուրս բերել զահլիճ գրադարանին՝ շինութիւնը, որով թէ ընկերու-թիւնը օգտված կը լինի նիւթականապէս և թէ մեր հասարակութիւնը կը միախառնէ բարոյա-պէտ: Այս մասին յոյս դնել սխիւղի վրա և սպա-սել, որ սխիւղը մի կտոր ամայի գետին կը տայ ընկերութեանը, մեր կարծիքով, անօրոյտ է, քանի որ այդպիսի հարցերում, որպէս ցոյց տը-ւեց փորձը, սխիւղը ոչ ընկերութիւն է ճանա-չում, և ոչ էլ բարեգործութիւն է ընդունում, այլ միայն ծանօթութիւն և բարեկամութիւն, որոնց առաջ նոյն իսկ խեղճ գիւղացու արտերը չեն ինայվում:

ՆԱՄԱԿ ԲԱՆԱԽԻՑ

Գեկտեմբերի 28-ին

Բալխանիում ռուսաց եկեղեցի շինող յանձ-նաժողովի նախագահ ինժեներ Բովորիւով, որ մի և նոյն ժամանակ կովկասեան II լեւնային շրջանի վարչութեան կառավարիչն է, սրանից մօտ մի ամիս առաջ յայտարարութիւններ էր ուղարկել բոլոր նաւթարդիւնաբերող ֆիրմանե-րին, առաջարկելով վաճառելու օգնել յանձնա-ժողովին՝ Բալխանիում ռուսաց եկեղեցի շինե-լու համար: Յայտարարութիւնից երևում է, որ յանձնաժողովը առ այժմ իր ձեռքի տակ ունի միմիայն 13,000 ռուբլի, որից 10,000 ռուբլին նուրիք է նաւթարդիւնաբերողների ժողովի խորհուրդը:

Բալխանիում եկեղեցիներն ունենալու կարիքը վաղուց զգացվել է և նաւթարդիւնաբերողների ժողովը քանի անգամ առիթ է ունեցել մտածե-լու այդ հարցի մասին: Եթէ ընթերցողները ի-շուտ են, կարծեմ որքանից մօտ տարի ու կէս առաջ էր, որ նաւթարդիւնաբերողները, իրանց ընդհանուր ժողովներից մէկում, Պ. Ղուկա-սեանի առաջարկութեամբ, որոշեցին ամեն մի աղօթարան համար 10,000 ռուբլի յատկացնել: Այդ հարցը իր ժամանակին նոյն իսկ մի թիկն օգտեմէն առաջ բերեց և ամենից շատ վրդով-վողը, ինչ ասել կուզի, «Новое Время» լրագրի տխրահռչակ խմբագիր Սուփօրին էր: Այժմ,

ինչպէս երևում է, ժողովը իր որոշած 10,000 ռուբլին արդէն յանձնել է յանձնաժողովին: Բա-լխանիում ռուսաց եկեղեցի շինելու գործը միանգամայն աջողված կարելի է համարել, քա-նի որ գործի գլուխն է անցել Գովորիւով: Ու-րեմն, հայոց և թիւրքաց աղօթարանների հարցը առ այժմ առկալի է մնում: Նաւթարդիւնաբե-րողների խորհուրդը հայոց եկեղեցու համար կը տայ, ի հարկէ, որոշած 10,000 ռուբլին. մնում է, որ միայն մէկը նախաձեռնող հանդիսանայ և նուէր հաւաքի նաւթարդիւնաբերողներից: Մեր նաւթարդիւնաբերողների մէջ, յիշար, թէ եր-սակայն կան մարդիկ, որոնք պարտականութիւն պիտի համարեն այդ բարենպաստ կործի նա-խաձեռնողը հանդիսանալ. որովհետեւ եթէ քանը մնայ մեր հոգեւոր կառավարութեան, այն ժա-մանակ շուտ տեսնեն զնդիպտոս: Իսկ եկեղեցի ունենալ միանգամայն անհրաժեշտ է:

Մ. Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գեկտեմբերի 21-ին

Արտասահմանի թերթերն միայն մէջ մայ-րաքաղաքէս գրուած թղթակցութիւն մը երե-ցաւ անցեալները, որուն մէջ ըսուած էր՝ թէ «Օրմանեան պատրիարքը հիմայ ամեն բան թա-ղեք» «Մշակ»-ի թղթակցին ո՞վ ըլլալը կ'ուզէ ի-մանալ: Իր դէմը ելլողին կը հարցունէ—«Գի-րուկը կը ծանցնաք, ո՞վ է»:

Թիֆլիսի փողոցային լրագրի մայրաքաղաքին թղթակցին ալ՝ Վիտի, Օրմանեան սրբազանին ծառայութիւն մը մատուցանելու համետ նպատակաւ «Գիրուկ» փնտելու ելնելով, եր-կինքը համատեղութիւնները չարժեք փոխու-փայնի պէս, առանց տեսնելու իր ոտքերուն առջև բացուած խորխորատը, դաքցը երուսա-ղէմի նկուղներուն մէջ գործեր էր Ըսելը չու-նիմք, կարող են փնտել և եթէ «հիտօ» և կարողութեամբ հոգեւոր սրբոյ չի յաջողի գտնել, բառահարկութեան ղիմը. միայն հետաքր-բէր եմ իմանալ թէ՛ ինչ պիտի ընէին Գի-րուկը եթէ գիտնային ո՞վ լինելը:

Օրմանեան սրբազան պէտք է լաւ համոզուած լինի, որ մենք հանդէպ իր անձին միշտ յարգանք կը տածենք՝ իբրեւ պատրիարքի հայրը թիւր-քից, կատարեալ անկեղծութեամբ է՝ ինչ որ կը գրեմք, և իր անձնականին հետ երբէք գործ չունիմք, բայց կատեմք և յաւիտեան պիտի ա-տեմք իր գործերը՝ ցոյքան չարոհական այս մաքրաւէշական ընթացքին մէջ, այն գերազանց պատճառաւ՝ որ աղքատ գնորդի բարձր սըր-բազնութիւնը չիտ առաւել կը սիրենք: Որքան ուրախ պիտի լինէինք, եթէ նորին սրբազնու-թիւնը, փոխանակ մեր ո՞վ լինելը փնտելը դըս-նելու, հաստատուն ապացոյցներով հերքած լի-նէր մեր գրածները՝ որ հրապարակի վրա կան ու կը մնան. այն, որոնք սրբազնութեան զնն-սեթ կը մնար ընել. իսկ եթէ մեր ո՞վ լինե-լը գտնելու մէջ բարի նպատակ մ'ունի գործադրելը՝ որ ներկայ քաղաքականութեան տեսակետով կրնայ օգտակար լինի ազգին՝ պատրաստ եմք այդ գոհողութիւն յանձն առ-նել և նորին սրբազնութիւնը ու յիշեալ թեր-թին թղթակցին ազատել պարտալ յղթնութե-նէ մը...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Յուսիկի 6-ին, Ծննդեան և Մկրտութեան օրը, Վանքի մայր եկեղեցում, հանդիսաւոր պա-տարագից յետոյ, հայոց հոգեւորականութիւնը, Վեհափառ Վաթիկոսի հետ միասին, զիմեց դէպի Յորդանան, ու և կատարեալ Ջորջեանի հանդէ-սը Պատարագիչ և հանդիսապետ էր թիֆլիսի առաջնորդ Սուրենեան արքեպիսկոպոսը. խաչը ջրից հանեց թիֆլիսի քաղաքային Գէորգ Եւ-ւանդիով: Հանդէսին ներկայ էր ժողովրդի խուռն բազմութիւն. կարող պահանջում էին համբարները, որոնք եկել էին իրանց դրօշա-ներով: Ընդունված սովորութեան համաձայն, շատերը ժողովրդից ընկան Կուրի մէջ և սկսե-ցին լողալ, երբ խաչը ջրուց դգվեց: Հանդէսն աւարովելուց յետոյ, շատերը դիմեցին առաջ-նորդարան, ուր սեղան կար պատրաստված, մատուցանելու իրանց չնորհաւորութիւնները Վե-հափառ Վաթիկոսին:

Կովկասեան կառավարչապետ իշխան Գօ-լիցին մտադիր է ճանապարհ ընկնել Պետեր-բուրգ ներկայ յունվարի 23-ին: Կառավարչապե-տի օգնական Ա. Ֆրեդէ սպասում է թիֆլի-սում յունվարի 19-ին: Իսկ թիֆլիսի նահանգա-պետ Բիկով, առողջանալով իր հիւանդու-թիւնից, երկը, յունվարի 8-ին, ճանապարհ ըն-կաւ Պետերբուրգ:

Մենք յայտնել էինք անցեալ տարի «Մշակի» մէջ, որ թիֆլիսում կազմվել է ակցիոնեական մի խոշոր ընկերութիւն, որ մտադիր է բանալ ձօթեք պատրաստելու գործարան: Կառավարու-թիւնը հաստատեց այդ ընկերութեան կանոնա-գրութիւնը: Ընկերութեան հիմնադիրներն են Ա.

տացնում է, որ վճարվելը դատարանը երևան հանեց Անթրի և նրա օգնականների 17 կեղծումները: Իսկական զոհվածները ապացուցանում են իբր թէ բարձրաստիճան անձերի դառնա-նուկները, որոնց նրանքով գործում էր Էստեր-հազի:

ՍՅՈՎԶՈՒՄ, 6 յունվարի: Բրիտանոլ բացվեց զանազան ճառով, որ կարգաց միջոցառումներով ձառնի մէջ, ի միջի այլոց ասված է. «Ինչ հետևանքներ էլ ունենայ Ռուսաստանի առաջարկած կոնֆերենցիան,—ոչ մէկ երկիր աչքա-թող չը պէտք է անէ ինքնապաշտպանութեան միջոցները: Նվեցիան պարտաւոր է անդադար ուժեղացնել իր չափից դուրս թող ինքնապաշտ-պանողական միջոցները: Զորքը և նաւատորմը կազմակերպված են բացառապէս պաշտպանու-թեան համար, և ոչ ոք չէ կարող մեղադրել Շվեդիան պատերազմական որ և է դիտաւորու-թեան համար: Թագաւորը ցանկանում է, որ պէս զի կազմվի փորձնական մօբիլիզացիայի նախագիծը:

ՎԱՐՇԱՎԱ, 7 յունվարի: Գնդապետ ժադրնս-կուն սպանողը, պօրուչիկ Բէկկարովիչը, դատա-պարտվեց նրացանի բռնկելուն: Զորքերի նրա-մանատարը մահվան պատիժը փոխարինեց ցմահ տաժանակիր աշխատանքով:

Ինչպես Խմբակային ճանապարհ ընկաւ Պե-տերբուրգ:

ԼՕՆԻՍՆ, 7 յունվարի: Ընդունելով խաղաղու-թեան միջնորդ դատարանի միջազգային ընկե-րութեան պատգամաւորութիւնը, Կամբոն պա-տասխանեց, որ Ժամայնալում թշնամական զը-գաժանքը չը կայ անդիմանալի ժողովրդի դէմ: Երկու երկրներն մասնաւոր ունեցում է այն փորձիկ տարածաշրջանները, որ սկսվեց Ֆաշտի գործի պատճառով: Ոչ Թրանսիան, ոչ էլ Ֆրան-սիական կառավարութիւնը պատերազմ չեն ցանկանում: Ինսպանիա համարված է, որ Եւրո-պայի ժողովուրդները լուրջ կերպով խաղաղու-թիւն են ցանկանում, և սրտանց միանում է Ռուսաստանի դիտաւորութիւններին, բայց վա-րենում է, որ դեռ շատ ժամանակ կանցնի, մինչև որ կիրառվի այն այդ դիտաւորութիւնները:

ՊԱՐԻՅ, 7 յունվարի: Էստրիանի հասաւ այս-տեղ: Նա հրաժարվում է ամեն տեսակ դիվի-նից: Ոչինչ միջնորդներ տեղի չունեցան:

ԲԱԹՈՒՄ, 7 յունվարի: Քաղաքային դուժման, Բաթումը, որպէս կլիմայական կայարան, զար-գացնելու նպատակով, որոնց նրա իրեք ձեռ-նարկողներն՝ քաղաքային բուլվարի վրա ըն-դարձակ կուրգով շինելու համար ընթերցարա-նով և կոնցէրտային դահլիճով:

ՊԱՐԻՅ, 7 յունվարի: «Goulois» լրագրի խոս-քով, բրեւական դատարանը արդէն մի քանի օր ետանդով դրադված է Իրէյֆուսի և օտար պե-տութիւնների ատուաշենքերի մէջ Բրիտանիայի տեղի ունեցած տեսակցութիւնների հարցով:

ՊԱՐԻՅ, 8 յունվարի: Աշխուղմի անդամ Շա-միլովարդ զանգառում է, որ այդքան ուշա-նում են Պիկարին դատի ենթարկել, և մեղա-դրում է վճարելի ատենանին, որ սա կողմնա-պահութեամբ է վերաբերվում Պիկարին:

ՄԱԿԻՐԻ, 8 յունվարի: Սէվրիա եկաւ «Գի-րալդո» նաւը Կոլումբի նշխարներով:

ՄԱԿԻՐԻ, 8 յունվարի: Բիսո հեռագրում է, որ ոչինչ փոփոխութիւն տեղի չունեցաւ Մանիլա-յում, բայց ապստամբութիւնը շարունակվում է ուժգնապէս: Մահմետականները որդաւան պա-տերազմ են քարոզում:

ՊԱՐԻՅ, 8 յունվարի: Տեղի ունեցաւ «Ֆրան-սիական հայրենիքի» դաշնակցութեան առաջին նիստը, որ հիմնել են հռչակաւոր գրականագէտ-ները, Իրէյֆուսի գործի պատճառով, խաղաղաց-ման նպատակով: Ներկայ էին 1,500 հոգի, ո-րոնց թուում Կալէնիակ և Ֆրանսիական ակա-դէմիայի մի քանի անդամներ: Փիւլ Լէմէտր մի ճառ արտասանեց, որի մէջ կատաղութեամբ դատապարտում էր գործի դէմ ուղղված աղի-տացիան և իրան դատի վերաբնութեան կողմ-նակից յայտարարեց: Լէմէտր բացատրեց դաշ-նակցութեան պարզամիտ. այն է՝ զարգացնել սէր դէպի հայրենիքը աշխատել ոչ ոք և միու-թիւն հաստատել ըստ ֆրանսիացիների մէջ. կազմակերպել զաւառական կոմիտեներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 2 յունվարի: Առաջին փոխա-ռութեան 68 տրամի ժամանակ 500 ր. տարան հետեւալ տոմսերը:

1.—1529, 12881, 14478, 16841:
2.—708, 2422, 3241, 5270, 9142, 9913, 13593, 14677, 14856, 16631, 19969:

3.—433, 2066, 2879, 10627:
4.—2573, 3487, 8832, 14077, 18695:
5.—4518, 5228, 9662, 13821, 16999, 17212, 19056, 19213, 19909:
6.—917, 7211, 8323, 12778, 13559, 19973:
7.—2440, 5395, 6606, 14439, 18480:
8.—472, 5454, 5491, 5851, 9980, 12140, 14061, 17714, 17718:
9.—3411, 7029, 18188:
10.—1411, 8484, 16203:
11.—1546, 3605, 9133, 16253, 17395, 18781:
12.—4033, 4206, 11381, 13614, 13827:
13.—3968:
14.—4745, 6941, 18827, 19056, 19174:
15.—4939, 6328, 6384, 8899, 14862, 17549:
16.—192, 1422, 7892, 9368, 10530, 16359:
17.—7752, 8554, 10934, 12622:
18.—2614, 4396, 8701, 9103, 13404, 15191:
19.—138, 259, 1145, 2407, 5375, 13649, 16884:
20.—9188, 18599:
21.—3352, 12729, 19760:
22.—5178, 9583, 13033, 13492, 13720, 17712:
23.—3001, 6391, 7253, 16494:
24.—539, 13371:
25.—6685, 7290, 14464, 16990, 19590:
26.—2255, 4810, 5945, 8079, 14633, 16715, 18976, 19216:
27.—1224, 5708, 7619, 7647, 13536, 13561:
28.—4632, 11943, 15429:
29.—656, 3296, 8777:
30.—8023, 8497, 8817, 11103, 16745, 16772:
31.—237, 4694, 4820, 7298, 9191, 13846, 17232, 19179, 19237:
32.—350, 4016, 6012, 15637, 16168:
33.—1424, 4327, 4728, 4840, 10723:
34.—7040, 8408, 9361, 9763, 9839, 12193:
35.—5512, 11529, 11841, 14468:
36.—8854, 9032, 18394:
37.—1028, 1290, 4000:
38.—11694, 13415, 14573, 17115, 17304:
39.—4342, 5731, 7207, 8420, 10007, 11616, 12778, 16937, 19508:
40.—7433, 7876, 12864:
41.—12460:
42.—358, 2495, 2714, 2842, 7278, 7405, 7477, 7911, 10478, 18112:
43.—8575, 8997, 12000, 14126, 17448, 18449, 18781:
44.—2131, 10938, 13289, 13740, 18650, 19550:
45.—5512, 5733, 12337, 12879, 15472, 15525, 17833:
46.—9587, 10107, 13125, 13944:
47.—3531, 5901, 7165, 7497:
48.—555, 913, 1303, 8168, 13254, 15645,
49.—4022, 7008, 10469, 12909:
50.—5279, 7323, 8080, 11239, 13488:

Տարած գումարները տրվում են բացառապէս Պետերբուրգում, ապրիլի 1-ին 1899 թ.ին:

Տրամ ընկած տոմսերը.
№№ սեր. 2358, 1102, 16063, 17501, 19690, 14653, 4148, 19154, 4186, 1086, 4587, 5274, 17349, 17136, 15150, 5564, 171, 7687, 898, 11731, 17635, 14526, 9312, 5330, 13080:

15714, 7774, 7754, 1854, 19651, 3755, 11556, 8613, 1698, 8517, 5381, 15619, 2506, 16749, 12291, 9932, 2442, 3417, 6818, 13867, 8999, 12894, 16389, 8904, 387, 4283, 4331, 10700, 3284, 11406, 12692, 276, 936, 5188, 10776, 4201, 1036, 14994, 199, 13186, 2817, 3694, 2137, 19618, 13829, 1921, 11506, 19769, 11109, 5640, 5287, 10384, 9284, 17587, 1750, 4669, 8775, 15753, 17611, 29, 7517, 13666, 16973, 19628, 9460, 9783, 11158, 15082, 18320, 11350, 1230, 4500, 14492, 19423, 15940, 8877, 388, 15469, 14641, 1861, 6838, 16788, 2820, 19621, 1842, 5850, 19653, 15038, 14474, 13101, 8881, 16920, 17893, 19515, 19802, 12967, 1397, 16421, 16666, 3875, 16321, 17634, 13035, 5514, 13441, 10252, 1827, 15008, 18556, 1625, 16058:

Խմբակիր՝ ԱԼԷԳՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ Հրատար.՝ ԱՐԹՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿԱՐՍՈՒՄ յունվարից բացվում է 2.
ՋԱՄԱԶԱՅՆԻ տղայոց ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ:
2—3

2. Ա Ռ Ա Ք Ե Լ Ե Ա Ն
Ձ Է Յ Թ Ո Ւ Ն
տեղագրական, ազգագրական, վարչական տե-տքութիւն (Արտատպած «Մշակից» մի քանի յա-կուսակներով): Գինը 20 կ.:
Գրքի այս հասցեով. А. Аракелян, Редакция «Мшакъ».
(Կ. Պ.) 5—10

ԿՆՆՏՐՈՆԱԿՆ ԻՐԱՎԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԻՓԼԻՍ Վաճառվում են Հետեւեալ նոր գրքերը.	Բ.	Կ.
ՕՐԱՑՈՑՑ Ս. Էջմիածնայ, 1899 թ. փա-ռակապմ	—	20
ՍՈՒՆԿՈՒԿՆԵՆՑ Գ. Ամուսիններ. կոմե-դիա հինգ արարուածով, երկ-տպագրութիւն (փոփոխած)	1	—
ՍԵՂԱՅԵՆ Ար. Եպիս. Յովնանէս և պիսկապոս Շահխանիսեանի կեն-սագրութիւնը. Պ. 1898 թ.	1	—
ԿՆԵՊԵՄ. Мое водолечение Е. 1898	1	—
ГЛОДЗИНСКИЙ Методъ Кройки верхняго дам-ского и дѣтскаго платья, изд. 18. 1898	6	50
БАЗАРОВЪ Метода Кройки верхняго и дамскаго платья, СПб. 1887	3	—
ՍՈՒՆԱԿՆԱՆՑ—Կարգված սիրտ, վէպ 1898.	—	40
Ղօնադուրս մնաց—փորձիկ.	—	20
Հասցէն՝ ТИФИСК, Центральная Книжная Тор-говля.	(Կ.)	6—10

Մագազին Ջալիսովի, Գոլովինսկի, «Րոստի» հիւրանոցի դիմաց
Ն Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ստացված է մեծ քանակութեամբ ամեն տեսակ շրջանակներ պատկերների հա-մար: Նապոնական և չինական ձեռակերտ գործեր. մետաքսի վրա 10—12 վերջոյա-նոց պատկերներ՝ սկսած 3 ռուբլուց: ձաշակով պատրաստած պահարաններ և էտա-ժերկաններ փայտից մինչև 100 տեսակ: Վազաններ՝ սկսած 25 կոպէկից շողք, կակե-մոնէ և էկրաններ՝ սկսած 35 կոպէկից, անտիմոնեան իրեղէններ և ձեւեր՝ սկսած 15 կոպէկից: Սինգապուրեան անանասներ՝ 3 ֆունտանոց, բանկան 1 ր. 40 կոպ.: Իր յա-ձախորդներին տանձառի համար զարդարանքներ, պօրտֆէլներ, ծոցատետեր, ալ-բոմներ և շքեղ թուղթ՝ գործարանական գներով: 2 ռուբլու իրեղէն առնողին ձրի կը տրվի, ըստ ընտրութեան, եսպոնական մի ձեռակերտ: Մագազինին կից արհեստանոցը բարեկարգված է՝ պատկերների համար շրջանակներ շինելու:

Ինչո՞ւ համար բարձրներկաներ առնել, բանի որ կարելի է դրանց փոխարինել եսպոնական ընտիր փայտէ պահարաններով՝ հատը 1 ռուբլուց մինչև 2 ռուբլի:
Ս. Ջալիսով

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖԻԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւապնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից,
Եւ հաւառակը՝ Բաթումից Մարսէլ, մոնթրէլ, Տրապիզոն, Սամսոն և Պոլս: Մեկնում է Բաթում-միջ չորեքշաբթի, 20 յունվարի (1 փետրվարի) ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԻԻԿ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ձախց յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալատներին՝ ԲԱԹՈՒՄԻՍՏԻՍ—պ. Վիկտոր դ'Արսոն, Նաբէլէժնայա: ԹԻՖԼԻՍԻՍՏԻՍ—պ. Օ. Գ. Բարեկեղա-նեանին, Սիօնի փող. Նախկին Արմորուտ քարվաստար: ԲԱԹՈՒՄ—պ. Ս. Իրիգարեանին, Կոլլաբե-կինայա նրապարակ: ՆՍՎՈՐՈՍԻՍՏԻՍ—պ. Մելիքիօր Հերչերօրեանին: (Կ. Տ. Շ.) 4—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՋԱՍԵԱՆ
Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեղի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և-րաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հան-դերձ նախկին արդիւնաբերական և կերտիսի գործարանական հաշուապահութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գնագրութիւն և ամենապատ ձեռքերի ուղղելը:
Պարապմունքներն սկսվելու են 1899 թ.ի յունվարի 15-ից, ձախց յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20 րոպէս յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, Ս Օ Լ Օ Լ Ա Կ, Սերգիեյեւայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:
Վերջիցեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՍՏԻՍ, Թիւրքեկէի գրա-վաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի ըլլող յայտնի գրավաճառանոցներում:
Գինն է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքայինները դիմելը պիտի ճանապարհ կարող են դիմել հե-ղինակին, առանց պօստի ծախս վճարելու:
(Կ. Տ. Շ.) 12—20

Գիւղատնտեսական գործիքներ և մեքենաներ
Լ. ԽԱՆ-ԱԶԵԱՆԻ
250 նկարով: Գինն է 50 կոպ.
Գրքի՝ Трудилко, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (Կ. Պ.) 8—50

ԲԺ. ՎԱՀՆԵ ՆՐԱԲՐՈՒՆԻ
ԸՆԿԵՐՈՒՄ Է ՀԻՒԱՆԳՆԵՐԻ
ճանապարհարար բզէի, կոկորդէի, ըթի և ա կանջի հիւանդութիւններով:
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.
Գոլովինսկի պրոսպ. № 28, տ. Աղաթովի:
13—15

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
„ՄՏՔԻ ՄՇԱԿԸ“
(Մուտ են փոքրածիւր օրենսդրութիւնը)
Գինը 50 40գէկ
Գրքի «Մշակի» Խմբագրատուն:
7—8

ԲԺԻՇԿ Զ. Յ. ՂՕԿԻԵԼՕՎԸ
Ընդունում է՝ վնասական, անտախտ, մոր-թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:
Առանձին ընդունելութիւնը, ներքին և մորթու-հիւանդութիւն ունեցողների համար՝ 12—1 ժա-մը: Թիւրքիս-միկրոսկոպային գործողութիւն՝ խուր-խի, մէզի, արեան և արտական հիւանդութիւն-ների Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
15—20

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Января 1899 г.